ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Հայկ Օհանյան, Ֆիսկալ ռիսկերի կառավարման վարչության առանձին գործառույթների համակարգող խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն, ք. Վիեննա, 2023 թվականի մայիսի 8-ից մինչև 19-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ Վիեննայի միացյալ ինստիտուտ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել «Խոցելիության ախտորոշում» թեմայով դասընթացին և մասնագիտական գիտելիքների զարգացմանը:

5. Քննարկված թեմաները՝

1. Խոցելիություններ և ճգնաժամեր
2. ԱՄՀ-ի խոցելիության գնահատում
3. Ֆիսկալ խոցելիության գնահատում՝ պարտքի կայունություն
4. Ֆինանսական խոցելիության գնահատում, ֆինանսական ցիկլեր և համակարգային ռիսկեր
5. Արտաքին խոցելիության գնահատում՝ դեֆոլտի ռիսկ, ընթացիկ հաշվի անհավասարակշռություններ, պահուստների համարժեքություն
6. Ռիսկի վրա հիմնված և ստոխաստիկ պարտքի կայունության վերլուծություն
7. Կուտակված ռիսկերի կանխատեսման մեթոդներ

6. Հանդիպումները, ելույթները՝

Գործուղման ընթացքում հնչել են ելույթներ, քննարկումներ: Ներկայացվել է դասավանդող-փորձագետների կողմից բարձրացված և քննարկված թեմաների ու առկա փորձերի վերաբերյալ քննարկումներ: Հանդես ենք եկել շնորհանդեսով՝ ներկայացնելով Չեխիայի Հանրապետության տվյալների հիման վրա արված վերլուծություն, որի նպատակն էր բացահայտել ռիսկերը՝ օգտագործելով հարկաբյուջետային, ֆինանսական, արտաքին և իրական հատվածների խոցելիության ցուցանիշները:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի արդյունքում, ձեռք բերված գիտելիքներն, օգտակար կլինեն ռիսկերի բացահայտման և կառավարման համար՝ օգտագործելով ախտորոշիչ գործիքներ, որոնք ներկայումս կիրառվում են ԱՄՀ-ի կողմից՝ բազմաոլորտային խոցելիություններին հետևելու և կուտակված ռիսկերի ցուցանիշները կանխատեսելու համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23.05.2023